«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

Հասցեատեր՝
«Անդրանիկ ՖԱ» ՀԿ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ vardan.dav@bk.ru

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25.08.2023թ.

Զեկուցող (անդամ)	Դավիթ Բակլաչյան
Անդամներ	Նարեկ Ադամյան
	Արփի Լազարյան

Վարույթ՝	ԱԽ-026
Խախտում՝	1. «Անդրանիկ» թիմի մարզիչ Նարեկ Դավթյանի կողմից խաղը սպասարկող մրցավարի առաջին օգնականին քաշքշելը (Հավելված 1 Ա, 32-րդ կետ) 2. «Անդրանիկ» թիմի երկրպագուների կողմից մրցավարների հասցեին վիրավորական արտահայտություններ թույլ տալը (Հավելված 1 Ա, 21-րդ կետ) 3. «Անդրանիկ» թիմի ադմինիստրատոր Վարդան Դավթյանի կողմից մրցավարների կայացրած որոշումների նկատմամբ անհամաձայնություն դրսևորելը (Հավելված 1 Ա, 33-րդ կետ)
Առաջնություն՝	2023-2024 Հայաստանի Առաջին Խմբի Առաջնություն
Խաղ՝	«Անդրանիկ» - «Նոա-2» (2:2), 21.08.2023թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Որակազրկել «Անդրանիկ» թիմի մարզիչ Նարեկ Դավթյանին 1 (մեկ) ամիս ժամկետով: Որակազրկումը տարածվում է 2023 թվականի օգոստոսի 21-ից մինչև 2023 թվականի սեպտեմբերի 21-ը ներառյալ:
2. Որակազրկել «Անդրանիկ» թիմի ադմինիստրատոր Վարդան Դավթյանին 2 խաղով: Որակազրկումը տարածքում է 2023 թվականի օգոստոսի 12-ից սկսած և ներառվում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում):
3. Պատասխանատվության միջոցների համակցության միջոցով «Անդրանի ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի՝ 500,000 ՀՀ դրամի չափով:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նիստի նախագահող՝

Դավիթ Բակլաչյան

<u>Ծանուցում</u>

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (legal@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 100.000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: